

**Հանձնաժողովի՝ 2010 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 892/2010 (ԵՄ)
կանոնակարգ կերային հավելումներին առնչվող որոշ արտադրանքների
կարգավիճակի մասին՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ
1831/2003 (ԵՀ) կանոնակարգի շրջանակում**

Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ

Պաշտոնական տեղեկագիր, L 266, 09/10/2010թ., էջեր 0006 - 0009

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին»
Պայմանագիրը,

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի՝ 2003 թվականի
սեպտեմբերի 22-ի թիվ 1831/2003 (ԵՀ) կանոնակարգը կենդանական կերի մեջ
հավելումների օգտագործման մասին [1] եւ, մասնավորապես, դրա 2(3)-րդ
հոդվածը,

Քանի որ՝

1) որոշ նյութերի, միկրոօրգանիզմների կամ պատրաստուկների, այսուհետ՝
արտադրանքներ, պարագայում անորոշ է դրանց կերային հավելումներ լինելը:
Անորոշությունը վերաբերում է որոշ արտադրանքների, որոնք թույլատրված են
որպես կերային հավելումներ եւ ներառված են կերային հավելումների
պաշտոնական ցուցակում, նաեւ ներառված են կերային նյութերի կատալոգում,
որը նախատեսված է կերերի շուկայահանման եւ օգտագործման, Եվրոպական
պառլամենտի եւ Խորհրդի թիվ 1831/2003 (ԵՀ) կանոնակարգը փոփոխելու եւ
Խորհրդի թիվ 79/373/ԵՏՀ հրահանգը, Հանձնաժողովի թիվ 80/511/ԵՏՀ
հրահանգը, Խորհրդի թիվ 82/471/ԵՏՀ, 83/228/ԵՏՀ, 93/74/ԵՏՀ, 93/113/ԵՀ եւ
96/25/ԵՀ հրահանգները եւ Հանձնաժողովի թիվ 2004/217/ԵՀ որոշումը ուժը
կորցրած ճանաչելու մասին [2] Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի՝ 2009
թվականի հուլիսի 13-ի թիվ 767/2009 ԵՀ կանոնակարգի 24-րդ հոդվածով,
որոշ արտադրանքների, որոնք ո՛չ թույլատրված են որպես կերային
հավելումներ, ո՛չ ներառված են կերային նյութերի կատալոգում, եւ որոշ

արտադրանքների, որոնք թույլատրված են որպես կերային հավելումներ, սակայն կարող էին ներառվել կերային նյութերի կատալոգում՝ թիվ 767/2009 (ԵՀ) կանոնակարգով սահմանված պայմաններին համապատասխան,

2) նման արտադրանքի մշակման գործում անհամապատասխանություններից խուսափելու, ազգային հսկողության իրավասու մարմինների աշխատանքը դյուրացնելու եւ շահագրգիռ կողմերի բեռը թեթեւացնելու համար որոշ արտադրանքների առումով անհրաժեշտ է ընդունել Կանոնակարգ, որով կսահմանվեն այն արտադրանքները, որոնք կերային հավելումներ չեն,

3) այդ սահմանման համար անհրաժեշտ է հաշվի առնել տվյալ արտադրանքների բոլոր հատկանիշները,

4) կերային հավելումների պաշտոնական ցուցակում ներառված արտադրանքների, մի կողմից, եւ կերային նյութերի կատալոգում նշված արտադրանքների, մյուս կողմից, հատկանիշների միջեւ համեմատությունից կարելի է քաղել մի քանի չափանիշներ՝ արտադրանքները որպես կերային նյութ, կերային հավելում կամ այլ արտադրանք դասակարգելու համար: Այս տարբերակման համար օգտակար չափանիշներ են, ի թիվս այլոց, արտադրանքների արտադրության եւ վերամշակման մեթոդը, ստանդարտացման մակարդակը, միատարրացումը (հոմոգենիզացիա), մաքրությունը, քիմիական սահմանումը եւ օգտագործման եղանակը: Ներդաշնակության նկատառումներով՝ միանման հատկություններով արտադրանքները պետք է դասակարգել համանման եղանակով: Այն արտադրանքների համար, որոնց կերային հավելումներ լինելու շուրջ կասկածներ կային, ուսումնասիրություններ են իրականացվել՝ հաշվի առնելով այս չափանիշները,

5) հիմնվելով այդ ուսումնասիրության վրա՝ թիվ 1831/2003 (ԵՀ) կանոնակարգի շրջանակում Հավելվածում նշված արտադրանքները չպետք է համարվեն կերային հավելումներ,

6) որպես կերային հավելումներ թույլատրված արտադրանքների պիտակավորման եւ կերային նյութերի ու այդ արտադրանքները պարունակող համակցված կերերի պիտակավորման առնչությամբ պետք է ապահովել անցումային ժամանակաշրջան, որպեսզի կերերի ոլորտում գործունեություն

իրականացնողներին դրանց հարմարվելու հնարավորություն տրվի: Ավելին, այդ արտադրանքները պետք է հանել կերային հավելումների պաշտոնական ցուցակից,

7) Սույն Կանոնակարգով նախատեսված միջոցառումները համապատասխանում են Սննդի շղթայի եւ կենդանիների առողջության հարցերով մշտական կոմիտեի եզրակացությանը,

ԸՆԴՈՒՆԵԼ Է ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

Հոդված 1

Թիվ 1831/2003 (ԵՀ) կանոնակարգի շրջանակում Հավելվածում նշված նյութերը, միկրոօրգանիզմները եւ պատրաստուկները (այսուհետ՝ «արտադրանքներ») կերային հավելումներ չեն:

Հոդված 2

Թիվ 1831/2003 (ԵՀ) կանոնակարգի շրջանակում Հավելվածի Մաս 1-ում թվարկված արտադրանքներն այլեւս չեն համարվելու որպես թույլատրված կերային հավելումներ:

Հոդված 3

Հավելվածի Մաս 1-ում նշված արտադրանքները, որոնք թիվ 1831/2003 (ԵՀ) կանոնակարգին համապատասխան պիտակավորվել են որպես կերային հավելումներ եւ նախնական խառնուրդներ, կարող են շարունակել շուկա հանվել մինչեւ 2013 թվականի հոկտեմբերի 9-ը եւ մնալ շուկայում մինչեւ պաշարների սպառվելը: Նույնը վերաբերում է կերային նյութերին եւ համակցված կերերին, որոնց պիտակավորման մեջ այդ արտադրանքները նշված են որպես կերային հավելումներ՝ թիվ 767/2008 (ԵՀ) կանոնակարգին համապատասխան:

Հոդված 4

Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո 20-րդ օրը:

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է եւ ուղղակիորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Բրյուսելում, 2010 թվականի հոկտեմբերի 8-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Նախագահ

Խոսե Մանուել Բարոզո

[1] ՊՏ թիվ L 268, 18.10.2003թ., էջ 29:

[2] ՊՏ թիվ L 229, 1.9.2009թ., էջ 1:

ՀԱՎԵԼՎԱԾ

Արտադրանքները, որոնք թիվ 1831/2003 (ԵՀ) կանոնակարգի շրջանակում կերային հավելումներ չեն.

ՄԱՍ 1

Արտադրանքներ, որոնք թույլատրվել են որպես կերային հավելումներ

- 1.1. Կալցիումի կարբոնատ
- 1.2. Նատրիումի դիհիդրո օրթոֆոսֆատ
- 1.3. Նատրիումի հիդրոֆոսֆատ 2-փոխարինված
- 1.4. Նատրիումի օրթոֆոսֆատ 3-փոխարինված
- 1.5. Նատրիումի սուլֆատ
- 1.6. Կալցիումի տետրահիդրո դիօրթոֆոսֆատ
- 1.7. Կալցիումի հիդրոֆոսֆատ
- 1.8. Տետրանատրիումի պիրոֆոսֆատ
- 1.9. Նատրիումի եռֆոսֆատ 5-փոխարինված
- 1.10. Կալցիումի պիրոֆոսֆատ 2-փոխարինված
- 1.11. Ծծմբաթթվային կալցիում, դիհիդրատ
- 1.12. Նատրիումի կարբոնատ
- 1.13. Նատրիումի հիդրոկարբոնատ
- 1.14. Ուտելի ճարպաթթուների նատրիումական, կալիումական եւ կալցիումական աղերը՝ առնվազն չորս կարբոնական ատոմներով/հագեցված ճարպերով
- 1.15. Ճարպաթթուների մոնո եւ երկգլիցերիդները՝ առնվազն չորս կարբոնական ատոմներով

1.16. Ուտելի ճարպաթթուների մոնո եւ երկգլիցերիդները՝ առնվազն չորս կարբոնական ատոմներով, հետեւյալ թթուներով եթերացված՝ քացախաթթու, կաթնաթթու, կիտրոնաթթու, գինեթթու, եւ մոնո եւ դիացետիլգինեթթու

1.17. Գլիցերին (սա վերաբերվում է եռատոմ գլիցերինին)

1.18. Պրոպիլենգլիկոլ

1.19. Պեկտիններ

ՄԱՍ 2

Արտադրանքներ, որոնք չեն թույլատրվել որպես կերային հավելումներ

2.1. Կալիումի քլորիդ

2.2. Կալցիումի քլորիդ

2.3. Կալցիում-նատրիումի ֆոսֆատ

2.4. Նատրիում-մագնեզիումի ֆոսֆատ

2.5. Մեթիլսուլֆոնիլմեթան (ՄՍՄ)

2.6. Շաքարի կոլեր սովորական

2.7. Գլյուկոզամին, խիտոզամին (ամինոշաքար-մոնոսախարիդ, որը խիտոզան եւ խիտին պոլիսախարիդների կառուցվածքի մաս է կազմում, արտադրվում է, օրինակ՝ խիտինային ծածկ ունեցող խեցգետնակերպերի եւ միջատների խեցիների հիդրոլիզի միջոցով, կամ հացահատիկային բույսերի, ինչպիսիք են՝ եգիպտացորենի կամ ցորենի ֆերմենտացման միջոցով)

2.8. Խոնդրոխիտին սուլֆատ (կրկնվող միավորով պոլիսախարիդ, որը բաղկացած է ամինոշաքարից եւ D-գլյուկուրոնային թթվից, խոնդրոխիտի սուլֆատի եթերները աճառների, ջլերի եւ ոսկորների գլխավոր կառուցվածքային բաղադրիչներն են)

2.9. Հիալուրոնային թթու (կրկնվող միավորով գլյուկոզամինոգլյուկան (բազմասախարիդ) որը բաղկացած է ամինոշաքարից (N-ացետիլ-D-գլյուկոզամին) եւ D-գլյուկուրոնային թթվից, որոնք առկա են մաշկի, ձուսպային

(սինովիա) հեղուկի եւ պորտալարի մեջ, արտադրվում է, օրինակ՝ կենդանական հյուսվածքից կամ բակտերիական ֆերմենտացիայի միջոցով)

2.10. Ձվի փոշի (չորացրած ձվեր առանց կճեպի կամ չորացրած սպիտակուցի (ալբումեն) եւ ձվի չորացրած դեղնուցի խառնուրդ)

2.11. Լակտուլոզ (երկսախարիդ (4-O-D-գալակտոպիրանոզիլ-D-ֆրուկտոզա), որն առաջանում է լակտոզայից՝ գլյուկոզան ֆրուկտոզայի իզոմերացնելու միջոցով: Սովորաբար առկա է ջերմամշակման ենթարկված կաթի եւ կաթնամթերքի մեջ)

2.12. Բույսերի ստերոլներ (ֆիտոստերինները ստերոիդային սպիրտերի խումբ են, որոնք սովորաբար փոքր քանակությամբ առաջանում են բույսերի մեջ եւ ներկայանում են որպես ազատ ստերոլներ կամ ճարպաթթուներով եթերացված)

2.13. Թավշածաղկի փոշի (*Tagetes sp.*-ի (թավշածաղիկ) չորացրած ծաղիկների աղացած փոշի)

2.14. Կարմիր պղպեղի փոշի (*Capsicum sp.*-ի (տաքդեղ) չորացրած պտուղների աղացած փոշի)

2.15. Քլորոելլայի կախույթ կամ փոշի (կենդանի *Chlorella sp.*-ի կախույթ ջրում կամ *Chlorella sp.*-ի չորացրած եւ աղացած փոշի)

2.16. Ջրիմուռի փոշի (միկրոջրիմուռի, օրինակ՝ *Schizochytrium sp.*-ի չորացրած եւ աղացած փոշի, որի բջիջներն ապակտիվացվել են)

2.17. Ֆերմենտացիայի արդյունքները եւ կողմնակի արտադրանքը (ֆերմենտացիայի ենթարկված կերային նյութերը խմորիչ միկրոօրգանիզմի ապակտիվացումից հետո եւ ֆերմենտացիայի կողմնակի արտադրանքը (սինովիճակում գտնվող կամ հեղուկ ֆերմենտացիայի ենթարկված արտադրանքի միջոցով չորացրած եւ աղացած) ակտիվ բաղադրիչը կամ ակտիվությունը հեռացնելուց հետո, միկրոօրգանիզմի ապակտիվացումը եւ ակտիվ բաղադրիչի (բաղադրիչների) միայն մնացորդային քանակությունը (քանակությունները) կամ արտադրանքի մեջ մնացող ակտիվությունը):